Ցիրաւի Շամախեցի Հայք առաջին օրինակն եղան Ռուսաստանի քաղաքաց Հայոց մէջ, եկեղեցւոյ յատուկ քարոզիչ ունենալով, և արդարեւ զովութեան արժանի են աւելի նրանով, որ սակաւաթիւ լինելով (400 տուն) և մեծ մասամբ աղքատ նիւթական կարողութեան կողմանէ, բայց հոգւով և սրբտով հարուստ լինելով՝ կարողացան քարոզչի մասին Ռուսաստանի մեծ մեծ քաղաքաց և բազմաթիւ հարուստ հայոց գերազանցել։

Եւ մի յարմարութիւն եւս այն էր, որ բարձրապատիւ Մակար վարդապետը լինելով Ղարաբաղցի, և Շամախցւոց բառբառը մօտ լինելով Ղարաբաղցւոց բառբառին՝ հասկանալի էր նրանց Մակար վարդապետի խօսքերը՝ ըստ ասութեան Շամախեցւոց, բայց այնպէս չեղաւ, և Մակար վարդապետը մի տարի քարոզչութեան պաշտօնով մնալով Շամախի քաղաքում պահանջեց աւելի եւս ոսկիկ քան ց600 րուբլին. և չստանալով գժգոհ ժողովրդից՝ գնաց մեծ ոսկւաւոր գործ որոնելու. իսկ նորա քարոզչութեան պաշտօնը կատարեցին Շամախու նորընծայ Արսէն և Ցաճատ ուսեալ և ուսուցիչ քահանայքն, և կատարում են անվարձ և անձանձրոյթ. խօսելով ժողովրդեանը կիւրակէ օրերում պատարագի միջոցին զրականական հասկանալի բարբառով, քահանայից առաջինը Երեւանցի և երկրորդը Ցփխիսեցի է։

Ր. Առաջնորդարանին չինութեան խնդիրն թեմական զրպրանոցի հաստատութեան նման մնաց անորոշ զրութեան մէջ այն է ի Բագու չինել, որ՝ասեն յարմարութիւն ունի և նահանգական քաղաք լինելով ամեն գիւրութիւն կարելի է գտնել ժողովրդեան գործոց յաջողութեան մասին և գիւղացւոց ամեն խնդրոց բաւականութիւն տալու համար, ինչպէս Բագու եղածս միջոցին քանիցս փորձեցի, թէ ի Շամախի որ 400 տուն Հայ լինելով՝ հայութեան կողմից մի գիւղ է ներկայացնում թէ և պարսիկք են տունք 3500, Լուտերականք 40 տուն, Ռուսք 50 տուն և Մալականք 100 տուն, և երկրաշարժի պատճառաւ բոլոր երեւելիքն հեռացել են և հեռանում են այժմ եւս Բագու և Անդրկասպեան աշխարհն, մնացողներն ամեն մի եկե-